03.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2020 թվականի N 1929 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 1383-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 20-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի

գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1383-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 6-րդ կետի «Քանակը» սյունակում «2200» թիվը փոխարինել «2300» թվով և «Արժեքը» սյունակում «4 245 000» թիվը՝ «6 245 000» թվով.

2) 22-րդ կետի «Քանակը» սյունակում «163158» թիվը փոխարինել «170000» թվով և «Արժեքը» սյունակում «206 708 000» թիվը՝ «213 000 000» թվով.

3) 23-րդ կետի «Քանակը» սյունակում «115600» թիվը փոխարինել «132000» թվով և «Արժեքը» սյունակում «77 400 000» թիվը՝ «85 000 000» թվով.

4) հավելվածը 38-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 39-րդ կետով.

39	7208	Երկաթից կամ չլեգիրված պողպատից հարթ գլանվածք	կգ	3600	1 300 000

5) «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «2 191 414 000» թիվը փոխարինել «2 208 606 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ